90 սեալ ճէլատն զարհուրեցաւ, անկաւ սուրն ի ձեռաց, ապա սկսաւ ճողել զմօրուքն: Եւ միւս դիհն զՊետրոս գլխիվայր խաչեալ. այն ինճայ հանած էր ողորմելի. զոր տեսողացն էր ողբալի:

BASILICA SAN LORENZO FUORI MURA

95 Եւ անտի գնացաք Սան Պաստիան եկեղեցի մի, որ էր անտի նետաձիգ. եւ ի ճանապարհին հանդիպեցաք վանաց մի Աւետում անուն. եւ երկրպագեալ չուեցաք անտի բազում եւ հասաք ի սուրբն Լուրէնճ, զոր Պուր-
100 կէզ քարտինալն քրոջ որդին Փափին նոր նորոգել տայր մեծածախ ընչիւք: Եւ շինած էր աւագ խորանին բոլորն գետնէն ի վեր յոյժ ազնիւ մէոմեռնի, որպէս հայելիք փայլուն, որ եկեղեցին կ'երեւէր ի նմա. որ մեք ունէաք
105 փոքր գաշարիկ մի, որ ամէն հեղ հետ մեզ շրջէր. եւ մերձեցեալ ի մէրմէրսն ետես ի նոսա զրէմս իւր. կարծէր թէ այլ չուն, հաջէր ի վերայ. զոր հազիւ լռեցուցաք: Եւ ներքեւն կայր մաղարայ մի մեծ իրրեւ գքաղաք. եւ վառեալ
110 ջահն իջաք ի ներս. զի ասին թէ ի ժամանակս կռապաշտութեան ասա էր թաղուցեալ սուրբն Սեղբեստրոս, եւ բազում սուրբք ընդ նմա. եւ էր յոյժ խոր եւ խաւարչտին. իբրեւ իջաք ի ներս աստիճան, անձուկ եւ նեղ ճանապարհ
115 տեղւոջ մտաք. որ եւ կանգուն գնալ չկարացաք, այլ կկզելով գլխիվայր: Եւ տեսաք մա-

104 զոր··· զոր: